**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԼԱՆԶԱՐՈՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննության առնելով «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանզարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

«2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանզարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 2020 թվականի հունվարի 21-ի դատական նիստում Սահմանադրական դատարանը որոշեց սույն գործի դատաքննությունը հետաձգել մինչև 2020 թվականի փետրվարի 11-ը՝ Սահմանադրական դատարանի դատավորների հարցերի վերաբերյալ Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ք. Գրիգորյանի բանավոր պատասխանները գրավոր ներկայացնելու, ինչպես նաև հիշյալ կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանության տեքս-

տում առկա անճշտությունները վերացնելու և ճշգրտված տեքստ ներկայացնելու հիմքերով՝ հիշյալ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների ճշգրիտ բովանդակությունը և ամբողջական ծավալը հստակեցնելու նպատակով: Հարկ է նշել, որ այդ կապակցությամբ Կառավարության ներկայացուցչին տրամադրվել է նաև Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունվարի 21-ի նիստի ձայնագրությունը:

2020 թվականի փետրվարի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Կառավարության ներկայացուցչի գրությունը, որին կից ներկայացվել է քննության առարկա գործով «Լրացուցիչ տեղեկություն» վերտառությամբ փաստաթուղթ:

Հիշյալ փաստաթղթի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում, նախ՝ ներառված չեն բոլոր հարցերի պատասխանները, իսկ առանձին հարցերի վերաբերյալ առկա են անհամապատասխանություններ՝ Կառավարության ներկայացուցչի բանավոր և գրավոր պատասխանների միջև, ինչպես նաև չի ներկայացվել վերոհիշյալ կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանզարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել՝ մինչև Կառավարության կողմից հիշյալ կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստը ստանալը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

11 փետրվարի 2020 թվականի
ՍԴԱՈ-26